

ԷՍՈՑԻՈՆԱԼ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ .
ՆՈՐ ՈՒՂԻ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԱՐԴ ԿՐԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մարդը դարեր ի վեր փորձով հասկացել ու զգացել է հուզական ինտելեկտի գոյությունն ու ազդեցությունը կյանքում: Հուզական ինտելեկտն այնքան հին է, որքան ինքը՝ մարդ արարածը, սակայն դրա գիտական հայտնաբերումից ու սահմանումից անցել է քննամենը երկու տասնամյակ, և չնայած նոր լինելուն, այս հասկացությունն իր կարևորությամբ ու նշանակությամբ գրավել է հոգեբանների և վարքի մասնագետների ուշադրությունը:

Հույզերը կարելի է բնորոշել մի քանի ձևով, սակայն մինչև այժմ միասնական, համընդհանուր սահմանում չկա: Հետազոտողների մեծ մասը այն բնորոշում են որպես բարդ հոգեֆիզիոլոգիական երևույթ: Հույզերն անձի սոցիալական կյանքին զուգընթաց կատարելագործվում են ձևավորելով նրա հուզական ինտելեկտը, որը խորապես ազդում է մարդկային կյանքի բոլոր կողմերի վրա: Ինտելեկտի մասին հոգեբանների կատարած առաջին ուսումնասիրությունները մեծ մասամբ վերաբերում էին դրա ճանաչողական կողմերին (հիշողություն, առաջադրանքի լուծում և այլն) և հիմնականում անդրադառնում էին ինտելեկտի ճանաչողական բաղադրիչների նպատակահարմար ու արդյունավետ կիրառման խնդրին:

Ավելի ուշ կատարված հետազոտություններում սկսեցին քննարկել ինտելեկտի այլ ասպեկտները և մարդու գործունեության վրա ազդող այլ ունակությունները: **Թոմդիքը** (Thomdike. R. L, 1920թ.) ինտելեկտուալ ու խելացի վարքը բնութագրելու համար տարբերակում էր ինտելեկտի հետևյալ տեսակները՝ առարկայական ինտելեկտ (գործիքների և միջոցների ստեղծման ու կիրառման հմտություն), վերացական ինտելեկտ (բառերի, թվերի և գիտական հասկացությունների կիրառման կարողություն) և սոցիալական ինտելեկտ (մարդկանց ճանաչում և միջանձնային փոխհարաբերություններում նախաձեռնողական ու ստեղծագործաբար հանդես գալու կարողություն): **Լիփերի** (1948թ.) կարծիքով «հուզական մտածողությունը» մաս է կազմում «տրամաբանական մտածողության» և նպաստում է տրամաբանական մտածողությանը, կամ ավելի քնդհանուր մասշտաբով

«ինտելեկտին»: Հետագայում հոգեբանները՝ Ն. Մայերն ու Պ.Մալավեյը (1993թ.) ավելի խոր ուսումնասիրություններ կատարեցին նվիրված էմոցիոնալ ինտելեկտի տարբեր կողմերի բացահայտմանը:

Քսաներոտ դարի սկզբին բազմաթիվ հոգեբաններ վերլուծեցին մարդու էության հարցը: Նրանք իրենց առջև խնդիր էին դրել պարզելու, թե մարդիկ ինչպես են զգում ու հուզվում և այդ հույզերը ինչ իմաստ են պարունակում:

Ի՞նչ է հույզը (Emotion)

Հուզական ինտելեկտի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է ինքը՝ հույզը: Հյուզի սահմանումը հոգեբանության բարդ ու չբացահայտված հարցերից մեկն է: Մարդիկ սովորաբար հույզ են անվանում վախը, գայլույթը, հաճույքը, վիշտը և այլն: Հույզերը սովորաբար դրդվում են ներքին կամ արտաքին գրգռիչների միջոցով: «Հույզ» եզրույթն առաջացել է լատիներեն *emovere* արմատից, որ նշանակում է շարժում, գրգռում, լարում կամ հուզում:

Մագդա Անոլդը (1960) այսպես է բնութագրում հույզը. «*Հույզը ֆիզիկական ռեակցիա է կազմված տարբեր զգացմունքներից (կործանում, կլանում, կողմնորոշում, պաշտպանություն, զրկվածություն, մերժում, հայտնագործում և այլն), որը խթանվում է որևէ դրապատճառով:*»

Մեր գործողություններից և ոչ մեկը զերծ չէ հույզերից: Մալավեյը, Մայերն և Քարսոնը (2000թ.) հույզը բացատրում են որպես զգացական վիճակ, որն արտահայտվում է ուրախության, անհանգստության, վախի, ատելության կամ այլ ձևերով և տարբերվում է կամային ու իմացական ձևերից: Ինչ վերաբերում է հույզերի դերին, պետք է ասենք, որ բոլոր վարքային դրսևորումները կապված են հույզերին: «*Հույզերը մեր զգայությունները փոխանցում են ուրիշներին, կարգավորում մեր փոխառնությունները ուրիշների հետ և մեզ ներգրավում սոցիալական փոխհարաբերությունների մեջ՝ սահուն դարձնելով այդ հարաբերությունները:*» **Վաթսոնը (1942 թ.)** այսպես է ձևակերպում. «*Հույզը ռեակցիայի ժառանգական ձև է, որը պայմանավորված է ֆիզիկական մեխանիզմում տեղի ունեցող խոր փոփոխություններով, հատկապես, հորմոնալ և ներզատիչ գեղձերի համակարգի փոփոխություններով:*»

Հույզերը խուլ ու համր երեխաների դեմքի վրա նշանակետով են արտահայտվում, ինչ լսող, խոսող երեխաների դեմքին, հետևապես հույզերը բնածին են ու ժառանգական: Մյուս կողմից, չենք կարող անտեսել նաև

հասարակության դերը հույզերի ձևավորման գործում: «Հասարակությունը
ևս իր դերակատարումն ունի հույզերի արտահայտչամիջոցների ձևավոր-
ման գործում: Օրինակ՝ ամերիկացիները զարմանքի պահին հոնքերը
բարձրացնում են, մինչդեռ չինացիներն այդ հույզը արտահայտում են
լեզուն գուրս բերելով»:

Ամբողջ 20-րդ դարում բնավորության մասին ուսումնասիրություն-
ները անդրադառնում էին միայն բացասական հույզերին (վախ, տագնապ,
վիշտ, դեպրեսիա, թշնամանք, բարկություն և այլն) և անտեսում բնավորու-
թյան դրական կողմերը (ուրախություն, հաճույք, ինքնավստահություն և
այլն): Միայն բացասական հույզերի կարևորումն ու շեշտադրումը մեծ
մասամբ Ֆրոյդի ուսմունքի ազդեցություն ու հետևանք է, քանի որ Ֆրոյդը
(1936 թ.) «տագնապի» հասկացությունը համարում էր հոգեվերլուծության
կորիզն ու հիմքը: Քենեդը (1929 թ.) և Մեյլեն (1936թ.) ևս իրենց տեսության
մեջ հիմնականում կենտրոնանում էին բացասական հույզերի վրա: Նրանց
համոզմամբ՝ խրոնիկ և երկարատև վախն ու զայրույթը վտանգում են
առողջությանը:

20-րդ դարի երկրորդ կեսին հետզհետե ուշադրությունը սեռվում է
դրական հույզերի վրա: Այս առնչությամբ առաջին լուրջ աշխատանքը կա-
տարեց Պոլ Միլը (1975) թվականին: Նա նշում է. «Հուզական դրական ար-
տահայտությունները մատնանշում են տարբեր մարդկանց դրական հույզե-
րի արտահայտման միջև երևացող կայուն տարբերությունները: Երբեմն
զգայական հաճույքների տարբեր ձևերը՝ քաղցր, հազեցումը և սեռական
հարաբերությունները առաջ են բերում դրական էմոցիաներ, քանի որ այդ
զգայական հաճույքները, որոնք ֆիզիոլոգիական փոփոխություններ են
պատճառում, զուգակցվում են դրական հույզերով, որոնք մոլորով ընկալվող
ու գիտակցված հաճույքներ են, այսինքն ոչ թե ֆիզիկական, այլ մտավոր
հաճույքներ են»:

Հույզերը չափազանց կարևոր դեր են խաղում կենդանիների, հատ-
կապես, մարդու վարքի ձևավորման գործում: Կարելի է ասել, որ տոանց
հույզերի անիմաստ է մարդու կյանքը: Երբ մարդը ուժեղ հույզ է ապրում,
ամբողջովին ձգտում է ինչ-որ գործ կատարել և պատասխանել տվյալ հույ-
զին: Մի շարք հույզերի դեպքում այդ պատասխանը պարզ է. «օրինակ՝ վա-
խը մեզ գգուշացնում է վտանգից, զայրույթը մեզ պատրաստում հարձակվել
հակառակորդի վրա, ատելությունը մեզ հուշում է խուսափել այն բաներից,
որ մեզ կհիվանդացնեն: Որոշ հույզերի դեպքում, ինչպես օրինակ հրճվան-

քի, վշտի, ամոթի և այլն, ավելի քիչ է բացահայտված այդ կասյր, թեև հետազոտողները մի շարք հավանական դժապատճառներ ենթադրում են: Երբ մարդը պետք է արագ որոշում կայացնի, հույզերը կարող են օգտակար խորհուրդներ տալ նրան, չնայած հաճախ ավելի նպատակահարմար է խուսափել հուզական պատասխաններից և տրամաբանորեն որոշում կայացնել, այդուհանդերձ, երբեմն «որոշվայնային զգացումները» ամենալավ խորհրդատուն են»:

Էմոցիոնալ ինտելեկտի կենսաբանական հիմքերը

Երկար տարիներ ի վեր հույզերի էության և ակունքի հայտնաբերումը անիրականալի երազանք էր թվում, սակայն վերջին տարիներին որոշակի առաջընթաց է արձանագրվել հույզի կենսաբանական հիմքերի հայտնաբերման գործում:

Մեզանում նոր բացահայտումներ են կատարվում ուղեղի գործունեության, իսկ հույզերի առաջացման մեջ՝ ուղեղի տարբեր հատվածների դերի մասին, ըստ որոնց, որոշակի կապ է ապացուցվել մի կողմից ուղեղի կեղևի ու միջուկի և մյուս կողմից՝ կեղևի և գոտկային գալարի (հիպոկամպի) միջև, դրանք փոխլրացնում են իրար և միասին համագործակցելով, ապահովում են մեր մտավոր կենսագործունեությունը: (Գոլման, 1995) Առօրյա կյանքի փոխհարաբերություններում հուզական ոչ ադեկվատ պատասխանները կարող են ուղեղի որոշ հատվածների խանգարումների հետևանք լինել: Մեր էմոցիաների և որոշումների, զգացումքների և տրամաբանության, ուղեղի և ապրումների միջև գոյություն ունի սերտ կապ:

Այս պնդման ամենից ակնհայտ օրինակը գլխուղեղի վնասվածք ստացած հիվանդներն են. «1979 թվականին գլխուղեղի աջ կիսագնդում վնասվածք ստացած հիվանդների մասին զեկույցներում նշվում էր, որ նրանց մոտ նկատվում էր չափազանց յուրահատուկ հուզազգացական երևույթ, այսինքն այդ հիվանդները չէին կարողանում ձեռքի կամ գլխի շարժումներով կամ ձայնի երանգով արտահայտել իրենց հույզերը: Հիվանդները գիտակցում էին սեփական հույզերը, սակայն չէին կարողանում դրանք փոխանցել ուրիշներին»:

«Բլանչերտը 1972-ին կատարած հետազոտության մեջ նկատեց, որ ուղեղի միջուկի վնասվածքի դեպքում մուկը առանց վախենալու քայլում է քնած կատվի վրայով, նույնիսկ չարաճծությամբ կծում նրա ականջը...: Մարդկանց պարագայում էլ այդ վնասվածքի դեպքում նրանք դառնում են հեզ ու հանդարտ և հուզականորեն պասսիվ»: Ուղեղի նշածն հատվածի

կամ միջուկի առաջնային պարտականությունը զգայարանների միջոցով կենսական պահանջմունքների և հույզերի մասին ստացված ինֆորմացիայի սահմանումն ու մեկնաբանումն է։ Ուղեղի միջուկի մեկ այլ աշխատանքը պայմանավորված է հիշողությունների հուզական իմաստավորման ապահովմամբ։ «Հիպոկամպը հիշողության մեջ դեր ունեցող հատվածներից մեկն է, որը ակտիվացնում է հիշողությունը առանց դրան հուզական երանգ կամ իմաստ տալու, իսկ ուղեղի ճակատային մասը ուղղակի դերակատար է հույզերի կարգավորման մեջ։ Ուղեղի ճակատային հատվածը էվոլյուցիայի տեսակետից համարվում է ուղեղի ամենավերջին ու նոր շերտը»։

Էմոցիոնալ ինտելեկտի հոգեբանական հիմունքները

Հետազոտությունները մատնանշում են, որ անցյալի փորձառությունները, մերձավորների հետ փոխհարաբերություններն ու ապրելակերպը ազդում են մեր հույզերի վրա։

Մարդկային անհատն իր կենսագործունեության ընթացքում բախվում է մտավոր գործունեության երկու տեսակների հետ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել ճանաչողական և հուզական ինտելեկտ։ Գյանքում մեր կատարած գործերը որոշվում են այս երկուսի միջոցով, ուրեմն միայն ճանաչողական ինտելեկտը չէ, որ որոշիչ է, այլ նաև հուզական տարրը։ Իրականում, մեր ճանաչողական ինտելեկտը չի կարող հանդես գալ առանց էմոցիոնալ դրսևորումների։ Մեր էմոցիաների և որոշումների, զգացմունքների և տրամաբանության, ուղեղի և ապրումների միջև գոյություն ունի սերտ կապ։

Ուսումնական բնագավառում թույլ առաջադիմություն ունեցող և նույնիսկ ուսումը անավարտ թողած անձինք երբեմն մեծ հաջողությունների են հասնում ամուսնական և աշխատանքային կյանքում։ Մեր կարծիքով, մարդկային կյանքի ինդիքներին վերաբերող հարցերում անհրաժեշտ է լուրջ մոտեցում դրսևորել, վերանայել մեր գնահատման չափորոշիչները, հատկապես, ինտելեկտուալ գործունեության վերաբերյալ կանխավարկածները։ Մեր կարծիքով, ժամանակն է վերամշակել առկա գնահատման գործիքներն ու թեստերը և այնտեղ ներառել հուզական ինտելեկտը գնահատող էլեմենտներ ու հատկանիշներ։

Դանիելը Գոլմանը 1995 թվականին իր հեղինակած «Էմոցիոնալ ինտելեկտ» գրքում հետևյալ ձևակերպումն է տվել էմոցիոնալ ինտելեկտին «սեփական հույզերն ու զգացումները ճանաչելու և կառավարելու հմտություն, ինքնախթանման, ուրիշների հույզերը ճանաչելու և միջանձնային

հարաբերությունները կարգավորելու կարողություն»։ «Էմոցիոնալ ինտելեկտը սեփական և այլոց զգացմունքներն ու հույզերը ճանաչելն է, հույզերի կիրառումը սեփական անձի և ուրիշների խթանման համար, սեփական հույզերի ղեկավարման և ուրիշների հետ փոխհարաբերությունների կարգավորման հմտությունը։ Գարձ ասած, ինքներս մեզ ճանաչելու, կառավարելու, ուրիշներին ճանաչելու և ուրիշներին կառավարելու հմտություն»։

Գոյություն ունեն դժվարությունները դիմագրավելու կամ դրանց հետ առնչվելու տարբեր մոդելներ։ Մեզանից յուրաքանչյուրը սեփական փորձի հիման վրա կիրառում է այս կամ այն մոդելը։

Գարդները (1983 թվական) խոսելով բազմակողմ ինտելեկտի մասին, անդրադառնում է նաև անսահմանական ինտելեկտին, որը ներառում է երկու կողմ. առաջինը ներանձնային ինտելեկտ, այսինքն սեփական անձի վերաբերյալ ճշգրիտ ու օբյեկտիվ պատկերացում ունենալու ներքին ու համակարգված կարողություն, դրանից արդյունավետ օգտվելու, սեփական հույզերը հասկանալու և վարքը ղեկավարելու կարողություն. երկրորդը միջանձնային ինտելեկտ, այսինքն ուրիշներին ըմբռնելու և նրանց բնավորության տարբերությունները, դրադապտացիաները, նպատակները հասկանալու հմտություն, ուրիշներին սիրելու և գթալու կարողություն։

Շաթը և նրա օգնականները (2001 թ.) յոթ առանձին հետազոտություններ են կատարել, որտեղ քննարկել են հուզական ինտելեկտի և միջանձնային փոխհարաբերությունների կապը։ Նրանք ապացուցեցին, որ Էմոցիոնալ բարձր ինտելեկտ ունեցող մարդիկ ինքնակառավարման ավելի մեծ ուժ ունեն և ավելի հանդուրժող են ուրիշների նկատմամբ։ Նրանք նաև եզրակացրին, որ Էմոցիոնալ ինտելեկտի և սոցիալական հմտությունների միջև կա ուղիղ համեմատական կապ, այսինքն Էմոցիոնալ բարձր ինտելեկտ ունեցող մարդիկ ի գործ են ձիշտ ձևով կառավարել իրենց փոխհարաբերությունները, ունեն ղեկավարման կարողություն և ավելի ընդունակ են միջանձնային պրոբլեմները լուծելու գործում։

Թեիբաևի մանկավարժական համալսարանի 100 ուսանողների շրջանակում կատարված մի հետազոտության ժամանակ պարզվեց, որ Էմոցիոնալ ինտելեկտը հակադարձ համեմատական է զայրույթին կամ ցասման հոգեվիճակին, սակայն դրական համեմատական հարաբերակցություն ունի «ներքին ու արտաքին հմտությունների» հետ։ Էմոցիոնալ ինտելեկտի և բարկության հարաբերակցության մասին կատարված սույն հետազոտության արդյունքները հաստատեցին **Գովմանի** (2009) տեսակետները և

Ռազելի ու Քաբ Մանի հետազոտությունների արդյունքները բարելավումը չափավորելու ուղղությամբ էմոցիոնալ ինտելեկտի կարգավորող դերի վերաբերյալ:

Սալավելի և Մայերի ուսումնասիրությունները արձանագրեցին, որ էմոցիոնալ բարձր ինտելեկտով օժտված մարդիկ ավելի լավ են դիմագրավում ու հակադարձում խնդիրներին, քանի որ ճշգրտորեն հասկանում և արտահայտում են իրենց հույզերը, գիտեն երբ և ինչպես արտահայտել սեփական զգացմունքները և արդյունավետորեն կառավարել իրենց հոգեվիճակը:

Մմիտը և նրա աշխատակիցները (2001թ.) իրենց կատարած հետազոտություններում հանգեցին այն եզրակացության, որ ինքնաճանաչումը հակառակ համեմատական է զայրույթի խոսքային արտահայտությանը և ագրեսիային: Ընդհանրապես, ինտելեկտի և բարելավության ու հայեցողության հարաբերակցության մասին կատարված հետազոտությունները հակառակ համեմատական են միմիանց: Ուսանողների շրջանակում կատարված մի հետազոտության արդյունքները ևս ապացուցում են, որ հուզական ինտելեկտը հակառակ համեմատական է ագրեսիային և վարքային խախտումներին:

Բաքի (1984թ.) կարծիքով՝ մարդը երկու համաժամանակյա համակարգ կամ մեխանիզմ ունի, որոնք դրդում ու ակտիվացնում են հույզերը. « առաջին համակարգը բնածին, ավտոմատ և ֆիզիոլոգիական է, որը ոչկամային կերպով հակազդում է արտաքին ազդակներին, մյուսը՝ փորձառության վրա հիմնված ճանաչողական համակարգն է, որը հակազդում է սոցիալականացված և վերախմաստավորված ձևով»:

Այսպիսով, անձի առանձնահատկությունների մի մասը փոխանցվում է ժառանգաբար, որոնք դրսևորվում են նպաստավոր պայմանների առկայության դեպքում: Դրանցից են ֆիզիկական հատկությունները և ճանաչողական կարողությունների մակարդակը (IQ): Մյուս կողմից, ընտանիքը և սոցիալական փոխհարաբերությունները ևս չափազանց կարևոր դեր ունեն էմոցիոնալ ինտելեկտի զարգացման գործում (EQ):

Մենք այն կարծիքին ենք, որ հուզական ինտելեկտի ճշգրիտ ու շարունակական ուսուցումը կարող է նպաստել առավել բարձր հատկանիշներով սերունդ դաստիարակելու գործին, քանի որ էմոցիոնալ բարձր ինտելեկտով օժտված մարդիկ ինքնակառավարման ավելի մեծ հմտություններ ունեն և ավելի փոխըմբռնողական հարաբերություններ են ծավա-

լում ուրիշների հետ: Նրանք ավելի խոր են ըմբռնում իրենց և ուրիշների գզգզումները և ավելի արդյունավետ կառավարում ու ղեկավարում դրանք:

Գրականություն

1. Պլուտոսկի, Ռոբերտ (1997), Հույզեր, թարգմանիչ՝ Մանսուր Ռամազան-զադե, առաջին հրատարակություն, Թեհրան, «Ասթան Ղոդա» հրատարակչություն, 1995 թ.
2. Ռայս, Ֆիլիպ (2009) Մարդու զարգացումը, թարգմանիչ՝ Մահշիդ Ֆորուզան, երրորդ հրատարակություն, Թեհրան, «Արջմանդ» հրատարակչություն, 2001 թ.
3. Ռաու Քլարենս, (1988) Հոգեբանության գլխավոր հարցադրումները, թարգմ.՝ Զավար Կանաթ զադե, առաջին հրատարակություն, Թեհրան, Իսլամական հեղափոխության կրթական և հրատարակչական կազմակերպություն:
4. Ռամազանի, Կալիդյահ և Աբդուլլահի, Մոհամմադ Հուսեյն, (2007 թ.), Էմոցիոնալ ինտելեկտի և զայրույթի դրսևորման ու զսպան հարաբերակցությունը ուսանողների մոտ, Հոգեբանություն և մամուլ, 37-րդ համար, տասներորդ տարեշրջան, առաջին համար:
5. Կիառոչի, Փոլեֆ և աշխատակիցներ (2007), Էմոցիոնալ ինտելեկտն առօրյա կյանքում, թարգմանիչ՝ Զաաֆար Նաջաֆիզանդ, առաջին հրատարակություն, «Սոխան» հրատ., 2003 թ.
6. Քելաթ, Ջեյմս (2009), ֆիզիոլոգիական հոգեբանություն, թարգմ.՝ Եսիհա Մեյդ Մոհամմադի, երկրորդ հատարակություն, Թեհրան, «Ռորան» հրատարակչություն, 2003.
7. Գոլման, Դանիել (2001), Էմոցիոնալ ինտելեկտը և երա կենսական նշանակությունը, թարգմ.՝ Համիդ Ռեզա Բալուչ, առաջին հրատարակություն, Թեհրան, «Ջեյհուն» հրատ., 1999 թ.
8. Գոլման, Դանիել (2005) Էմոցիոնալ ինտելեկտ, թարգմանիչ՝ Նասրին Փարսա, առաջին հրատարակություն, Թեհրան, «Ռոշդ» հրատարակչություն, 1995 թ.
9. Chan, D.W. (2004). Perceived emotional intelligence and self-efficacy among Chinese secondary school teachers in Hong Kong. *Personality and Differences*, 36, 1781 – 1795.
10. Goleman D. working with emotional intelligence, New York. Bantam Books, 1998.
11. Goleman, D. (1995). "Emotional intelligence; why it can matter more than IQ" New York: Bantam Books.
12. Mayar, J.D., Caruso, D.R. & Salovey, P. (2000). Selecting a measure of Emotional intelligence, In Bar – on & et al.(eds). *Handbook of emotional intelligence*, (PP320 – 342). California, Bass Inc.
13. Mayer JD and Salovey P. The intelligence of emotional intelligence, intelligence, 1993; 17(4), 433-442.
14. Salovey, P.; Mayer, J. D. & Caruso, D. (2002). The positive psychology of emotional intelligence. In C. R. Snyder & S. J. Lopez(ed). *Handbook of positive psychology*(pp. 156 – 171). Oxford: Oxford University Press.
15. Schutte, N. & Malouff, J. (2001). Emotional intelligence and , interpersonal relation. *The Journal of Social Psychology*, 141(4), 523 – 536.

Biological and Psychological Foundation of Emotional Intelligence, New Strategy in Intelligent Man Upbringing

This paper analyzes the biological and psychological foundation of emotional intelligence. In this study emotional intelligence is considered as the framework for understanding the social relationship. The empirical literature review shows that growth and function of some parts of the brain such as pupa and hippocampus regarding social relationship cause the improvement of emotional intelligence. It has been tried to focus on the essence of this phenomenon in order to recognize and handle the emotions and feelings of oneself and others.